600.0276.11.07.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2018 թվականի №276Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի №319Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի հունիսի 19-ին «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №319Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0610 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0610 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը 1 տարով երկարաձգելու հայտով,

բ) «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման գործարար ծրագրի համաձայն՝ 1 տարի կառուցման ժամանակահատվածից 4 ամիսը նախատեսված էր նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, իսկ 2 ամիսը՝ փորձաքննության համար,

գ) Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերի 28-ին Հանձնաժողով է ներկայացրել «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0610 լիցենզիայով ամրագրված «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №319Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի հուլիսի 12-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի հունվարի 12-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0610 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 22-ի №652-6434 գրությամբ ներկայացված №ՊԲԵՆ17/51-45 երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասունինը հազար վեց հարյուր քսանհինգ դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր իննսունինը հազար երկու հարյուր հիսուն դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի փետրվարի 26-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 12-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
11 հուլիսի 2018թ.